# ԲՈՒՐԱՍՏԱՆ

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿԵԱՆ

1852

Բ. ՏԱՐԻ | ՅՈՒՆՈՒԱՐ | ԹԻՒ 1.


## ԿԵՑՑԷ՛ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

[illegible]

Ահ հայրենեաց ամեն յոգւոյս յափշտակեցի ի յանս
Զորդւոցն ազգիս յանձն առնել կոչսամա պաշտելի բանակին .
Քեզ միութիւն յօժարիմ օրհնութեան Հայաստան
Ի փառս անմահ գեղդ ծաղկեցեալ մանկունք լերանց փառաւորեալք .
Փայլէր տարերս սիրոյդ ամենայն միութեան մշտնջենաւոր
Ընդ ընդ , մինչ ի հեռս աշխարհն օրհնեալ Հայաստան
Աշխարհ ամենայն , այսպէս սէր . . . հեծ յուր ազգս հետ փառաց
Զինուորեալ մի մի յաւէտ . . . մի յաջողեալ է սէր առաջ .
Ոչ մեկնին սէր , ոչ խորհրդով յամառութեան ահեղ մեկ
Այլ , այդ կապեցէ զնա կենդանի զեռ յօժարիս արժանացի .
Ի փառս յաղթեալ քաջացն բազմաց խաղաց փառաց
Նոյ ի ձեռին հայոց ծերունեաց , այսպիսեան կենդանի մնաց .
Սրբութեամբ որ զարթեալ սրտէ ծագեցն փայլ ծովուն
Փառաց նմանես քրիստոնէական յուսոյ փառաւոր յաւիտենից .
Միաբանութիւն կայր նախնեաց ժամանակին մեր գիրեաւ
Միաբանեալ բերէք զգուշ . . . քաջութիւն են ազգք .
Տան Արամայ սրտի հայեցեալ ի կենդան նախնեաց նմանեցաւ
Հաճեաց սուրբ ի կամս քնքշի խաղաղութեան մեծացեալ փառք .
Զայն սուրբ անդրիս սուրբ սրբոց ցերեկ մտաց ի խորոց
Խաղաղութեան սուրբ մեծագոյն երկինք կոչեսցի Հայաստան .
Շնորհաբերեալ երեկ կենաց յաւիտենականութեան ակնածեալ
Բարեաց անձին մեծարանաց մշտնջենաւոր ի սէր ծաղկեսցի .
Ի ձեռագործ ժամուց սուրբ արծարծեալ մեծ Տիգրան
Պետ հայրենեացս Տրդատ սանդուղ զօրեղ խորհրդոյ զեռ յաւիտեան
Որ ի ձեռին մեծին սանդուղ զերդ Գրիգորի հօրն մերոյ
Զնախնեացն բարեկեաց մերոյ ; զօրացուցանել կանգնեսցէ .

Արդ ամենեցուն սրտով առատաբաշխ սիրով եւ մերու աշխարհի
Դուստր յօժարութեան ընծայել սրտիս հարազատ յաւիտեան .
Յովհաննէս սրբոյն յաւուր Պարթևաց յարութեան փառաբանութեան
Յաղթութեան ամենայն Տիգրանայ փառաց կանգնեալ զօրաց անդրանկաց
Արամ Հայկ Յաբեթ , Արամ զօրացեալ , մեծ հայրենեաց մերոյ
Արտաշիսեանց Արշակունեաց զօրաց Սմբատ Բագրատունի
Պարթև սուրբ Լուսաւորիչ , Հայկազունք Արշակեանց առաքինեաց
Երկիր , Հայոց , Տիգրանեան զօրաց յաջողեսցի Հայաստան
Երկին ի փառս արքայ Ներսէսի սուրբ սրբազան յաւիտենից
Ի սէր միաբանեալ փառաց զօրացեալ խաղաղութեան մերոյ
Ընդ սուրբ սրտին հայոց հայրենեաց փառաց ազգին մերոյ
Լուսաւորչի կենդանի երկին ի շնորհս զօրաց փառաց .
Այս ընծայեցի զօր յաւուր երկնից սուրբ Լուսաւորչին մեծափառաց
Շնորհ հայրենեաց մեր հայրենեաց յաւիտեանս ի փառաց .
Ներսէս , Յոհան , Գրիգորիոս ի սուրբ միաբանութեան
Զլուսաւորչեան սրբոյ մերոյ սրտին սուրբ միաբանեսցի .
Հաստատեալ հայոց աշխարհ սէր ի խորհուրդ Քրիստոսի զօրացեալ
Եւ փառաւորեալ հայոց փառաց խաղաղութեան միաբանեալ .
Զնախնեացն մեր յաւիտենից զօրացեալ մեր մերոյ
Զամենայն յաւիտեան սուրբ հայրենեաց մերոյ Տիգրանայ զօրացեալ .
Բազմամբոխ Արշակունեաց ազգաց ժամանակէ ի մերոյ սրբոյ կենդանի .
Եւ այսուհետև նմանեաց սիրոյ եւ մեր սուրբ մշտնջենաւոր . . .
Արդ եկէք ի միասին սիրով մաղթեսցուք ի Քրիստոս
Ընդ սաղմոսերգել զիմ սիրոյ հայրենեաց ՏՈՒՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ .

Փ . Կ . Հ .

# ՆՈՒԷՐ

## ԱՄԱՆՈՐԱՑԵՐ ՕՂՋՈՒՆԻ

ԵՒ

## ՍԻՐԱԼԻՐ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Ի ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ

ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ԱՋԱԿՑՈՂԱՑ , ԸՆԹԵՐՑԵԱԼ Ի ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ ԴՊՐՈՑԻՍ

ՅԱՌԱՒՕՏՈՒ ԱՌԱՋՆՈՒՄ ԱՒՈՒՐ ՅՈՒՆՈՒԱՐԻ

1852 ԱՄԻՆ

Այն ինչ շուրջ զուշ յածեալ 'ի
շրջագոյնս տաճարխնկաւոր զգաս-
կաւելի ատենիս զակումբ դիտողու-
թեան և զորդւոցդ հօրցդ ժողով ակ-
նածելի 'ի հանդէս պայմանապաշաճ
մերոյ բանախօսութեանս հոգեսարդ
մանկանց բերելով, և 'ի շուք փառաց
մանկունս գրկախառնութեամբ երկայ-
նամիտ ուսմանց համախմբելով, այն ինչ
զհայրենասիրութեան Մեհեկեան տեսանեմ
զդէմս բերկրանաց դուարձացեալ,
և բուն բազահրաշ արժանեաց հրաշակեալ
պայծառութեամբ յուսատւութեան զարդարեալ,
ընդ ծագումն անձկալի արշալուսոյ,
և զարթուց բարբառով 'ի ձեռնձեռս այնքա-
նեացն՝ ոչ պատմելի արկանէ կռառ-
բերոց, այլ 'ի հուր անդր ուղղաձիգու-
թեան մտաւոր պատարագելով, խոր-
հուրդք իմ զանօթի հարկանին, և
միտք իմ այլ յայլն անձկանաւն ցեխ-
արդն գոյացականին նաւարկութու-
թեանս, սիրտ իմ բաբախէ, և հոգի
ասուբս թեւածէ խորհրդոյս մտա-
ցն զարմանալին հասուցանել զուարթոց
մերոց. և արգասիք ամ այլ ամենայն
նախ քան և 'ի վեր քան զձերոց Աստու-
ածանցդ բարոյել արարեալ 'ի գլուխ, և
զերախտապարտութեանս նուէրել զան
հրաւիրեալ դարձեալ յայսմ հայրենա-
սէր ոգւոյ Մեհեկեանց 'ի սրտի զգան-
ձին ուսումս. զի եթէ անխոտոռա-
կի սրտակիցք են մի զմիոյ ինի բարդեալ
եալ 'ի մեզ սրտակէն ամենայն շնորհա-
ցըդ ձերոց հանդէս զօրանալեացն, և
սիրային գգուանաց փառքիւն ան-
նախանձ, սակս զձերոյդ նազարանել
սիրանիշ հանդիսից ծածկաձայն ներբո-
ղին, և զբաղձանս ապագայութեան
նոր հարկանել հուշակ բարեհամբաւ

ընդ ամենայն երկիր՝ անհաւասարելի
ինչ իցէ մեզ, որ զի և սրտակէր ա-
ւուրս առ 'ի նոյն կարդալ մատուցել
յօրինեալ բաղձալիքն ապագայ և 'ի բա-
րեհամբոյր ազգացն ամենայնութենէ փա-
ռաբանեալ, այլ զիարդ իցէ մարթ
ձշմարտութեամբ ըստ արժանեաց պարգևեալ,
կամ փոքր մանկունս ընդ բազմա-
բեր ընծայել ահեղեան Աստուածն ընդ
քաղցրագոյն մարդասիրութեանցդ
տեսեալ հոգւոց աներկաչափ Մեհեկեան.
զի և անդուստ երկիւղ խաւարի և
սրտի սրտիցս պատկեր 'ի վերայ
կայցէ մեզ ամենայն և զիջանի, թէ
ոչ մեծամասնութեան արդիւն արժանիցն
մեզ յանգանգութեանց յարդարաբան
առեալք, մեծաւ յանձնարկութեան ձեռ-
ներիցութեամբ, և որ գլխովին ու-
սուցանէ է 'ի մերոյս գրչութեանց
և յանձնարկելով անկ բանիցն թէ
զյաւէտ բարեդուոյ ժողովոյ ընդ բա-
նական հարցանելով կոչեցելոց գա-
ղափարութիւն, յորոց զմարմին կեան-
ողն ձեռնեցոյց, և ընդ ծնողական գը-
թութեան ասացուք 'ի կէս զձերդ սիրտ
բարեանձնկի և զխնամոց հանդէս զա-
րմանալի. Այսպէս և ոչ խոհութեամբ
բան գտցուք զնոսա ձեզ հանդուցա-
նելոյ, զերբանելի կենաց պատրաստել
մեզ զպերճ բարեմասնութիւն. և ա-
պէս առաւելի ոչ հաստատելով լու-
սոյն, զնոյն կոյ խնամոյ ընդ ձեզ և
ընդ նոսա, զի և մեծ է հարկ բանիցն
մարմինն. Առաւաշնորհ կենաց պատ-
գամ զեղանելիս եթէ յինք մանկական
հասակիս հայրենասէր խոնարհեալ և
ընդ պատկերակս մերումն անփոփ-
ձութեան, և մի ամենայն յօդուածոց
զձերոց գծուարարելոյն քանիցս բարո-

նեցան վաստակս երկոյնաւորս տրութեամբ, և Աստուածորդութեամբ յաւէտ քան աստուածութեամբ դըտեղեկեալ փոյթ կալան զօգնութիւն գեղեցկագոյն պայծառացեալ լուսաւորութեանն, և անպարտ քաղաքավարութեան մերոյ անդրդուելիանս հըրկեցին հայրաբար, և զի՞ պէտս են մեզ այլոցն կշռութիւնք. զի ահա ըզհաստն երկնանձրեւ խնամոց յանկախանձ ազդեցաց հայրագութ սրտից արբեալ ընկալցուք 'ի հրատապ խանձուց անուսումնութեան, և զերծեալք 'ի խաւարամտութեր գիշերայն տխրութենէ, ծերով անայլմամբ առաջնորդութեամբդ մխիթարեցուք 'ի լոյս երկնաւոր խնամութեան, որ առաւելն է մեզ քան զոսկի կարասեկան և քան զականս պատուականս. Այս սըգարեւ ձեզ միայն արժան է իրաւ զառաջինն մատուցանել զբարձ 'ի բարերարոյ մերոյ գումարս, որ զամենեցուն միանգամայն 'ի ձեզ բոլորգակէք անձամբ 'ի լեզուաց և 'ի մեր քան զամենեւ գծայց եւ զննամածուաց զծուատաս կոչել արդեամբ։ Այս ձեզ միայն, առ ձեզ և նախ քան զամենայն հասուցանել զառաջնապատուց բարբառ երանիս առ. Հարհապար գոհարանութեամբ բոլորել Աստուածանէր Մեհեկ պսակ փայլեցուցէք. Զանն ձեր միայն նուիրել զպատարագ առաւօտու աղօթից 'ի բարձունս, և զբանաւոր պաշտամանն աղօթաւորգութիւն 'ի սկզբնածոյր շող արփւոյն և յառաջին օր նորոյ Հարհաբեր ամւոյս, և կարի յիշտութիւն. Քանզի եթէ ծնողաց բան մարմնոյ բանաւոր վասակից և անդրկեր հօգոյն հատուցմունք անմձարելի են յորդւոց, յոյր ոսկս և զառ 'ի նոցանէ ընկեանազն յազագօնյուն բոլ ընդ պտոյտ են անգլանալի, այս և պրանդս և ըզ հոգեհրահանգ վարժիչս զառաջինն ձեզ մատուցանել ոչ շատ ինչ գրեցի նուէր վերջոյն և դուզնարեն, որ 'ի ձերոց առ մեզ անձրեւեալ բարութեամ բարեօք, կանոնաւոր պայծառութեամբ զուարճացող զանազաթիւն խմանալի պատմութենս; և բաձագորդ փոյթութեամբ բեղմնաւորեա յարդարեաց վերամանցեալ անդաստանս։

Նարեկացուանի մեզ օրս և նուիրական կոչումն նորոյ ամիս, նա՞ և ժամս խնճոյն զեխուն բերկրանօք ամենայն երախտալէտ սրտից, ոչ պակաս քան զոգեոյն տարւոյս դուշակս բարեաց 'ի մեր երեւեալ, յորում բուռն է մեզ եւ զհայցդ եւ զխնամածուացն. ըզ հանդէպ.նդ. Պերճապատիւ բարերարացդ մերոց յոժարափոյթ ամենայն հատուցանել զանկէշտ վաստակս, և 'ի նըւագ գոհաբանական զհամաշուն մըտաւոր շնորհակալութեանս առ ձեզ զանհաւանեալս. Ձեզ՝ ո Աստուածասէր սուրբ Վանահայրդ և Առաքելաշաւիղ Սրբազան Հայր, որ հովհուեսթ յորդորմամբ և Աստուածապարգեւ օրհնութիւն իմաստից մերում ստացելութեան մատուցեր զանկեան ընթանալ ճանապարհ, և զառաջնորդն հորդեցեր մեզ 'ի հայթս և 'ի դիւրինս և 'ի շաւիղ արդարութ, և զփշոտեալն զխառնան և զխաւթարեալն յանկարծաճոխ առաջին բըղնուպոց և 'ի բովանդակ հարազահարութեանց գեղեցկակերտ վարժացացն զանազութիւն, հոգեշնոր վաստակոցդ կանգնեցեր 'ի պարգեւ բարութի Աստուածատէր ժողովրդոց և յաւուրն առաջինի Աղուանայն, Ասոհայեան ոգեւոր երեւեալ 'ի պանծալիութեան թեան վայրս Հայկեան զարմութեանդա նորոգէ՞ և Աստուծոյ Հոգւոյն բերանդի շնորհաց Մատակարար հագեխորամ։

Առ ձեզ ատեմ, առ ընդոգոնի պարոն Վեհափառապետ Մեհնակից, որ առատ և անձնահաճ արդեամբ և, ազգասէր հեղագրութեամբ վարժիչս վաւերացէք կոչել ատարեզ, և զօրաւոր գծեւանորդն գլխապատն բանցքնալոյ յօդեցէք մեզ 'ի ձորմնագողկաձոյլ, մինչ ընդ բոլորոյ ընդելացոյս բերելով հրահանգ, և զանհնունն պաշտպանութիւնդ ոչ աղահեցէք առ ամենայն խաչընդաւոյն և չարայդ խոսել. Առ ձեզ ակնարկեմ ո բարերար Հոգաբարձուք՝

Հարք մեր երևելեալ յետ բնակմանս,
և վեհք քան զնոսա, որ զձերոց զաւ-
ակին և զանձնական հօրցն անգամ-
մանս տարագիր 'ի սրտից վարեալ զը-
բաժանդեսս ընդդէմ չարաչար բռ-
նադատելեաց՝ անագորենի բռնաւորին
ազգասիրութեանն սուրբ, կարմրեցոյք,
յանկեալք հաստատունք և 'ի փառս
անպատ ճառագայթից հոյակապ Տա-
ճարիս խնամութեան, և պանծային
հայրացն սուրբ և զինուց զէնքն ծանրո-
կեր ստանձնեալ կամակորաց՝ հակե-
ցէք որպէս ձերոց հարազատաց բա-
րեաց և առաքինի կրթութեան մա-
տաղատեաց Թէեն ածեալ ախոյեան,
և հաւերուն չնորհիւտոյս ձերոյ ան-
դուլ վաստակոյն գրաւեցէք չատ
յաղթանակաց, և քաղուն հնազա-
նից, և ոհմ յաղագս ամենայնի ազ-
գացին զամենեցուն գծեր առ հաստ-
բակ յաւերժացելատակ արգիւնս և ըզ-
հաւատարիմ ազգասէր հօրոց և խը-
նամոց ըմբերան բարեմաղթութիւ-
յերդ, առնուլ ոչինչ ապարէն անդէպ
իւչ էր, եթէ մանկական Թանձամարա-
նութեանս և ոտարանոս լեզուա-
մարթ էր համարձն 'ի ձերոյ կոյս ա-
ռաքինագործ բաժարութեանց և ըզ-
քերթածոյ հանդիսից Վենետկոյ,
և որպէս բանիս կարգ զեղծն առել-
բուռն առնէ մեզ, թէ ոչ կամակոր ար-
գարացի ուշ 'ի կուրծս առնէք մեզ,
մի փանաքիմոց գրչութեամբ սուտ ե-
րանս ախոնել զարթուցեալ հանդի-
սիւ ձերոց դիւցազնական մեծագոր-
ծութեանց ։ Կացցէ այս մնայցէ յա-
ւէժ յիշատակ ձերոյ առաքինութեանց
'ի մատեան սրտից բերկրելոյս, ա-
կերանդակ փորագրեալ անադարմելի
յանձեռամբրձ գրչութիւնս, որ հըն-
չեսցէ մեծագոյն քան զփող ատղա-
փող, և քան զՍտարահարութիւն բազ-
մոհշիւն նուագարանաց, լաւ եթէ
մեծացուք պատուական քան զե-
զուս հօգարս և քան զգարբանարքիւ-
րըս. և զի՞նչ եթէ իւզոյս խոստա-
տացի՞ իւչ անհասութիւն բանիցս,
և վայելչախօսութեան եղանակ մինչև
ցայս վայր տեղի՞ տացէ յինէն ; և իշ-
խան իւչ իցէն կոչոծանիր ահաբեկ

կաչկանդել զչքթուռնս և կապակեալ զար-
ժանի չնորհապարտութիւն օրհներգ.
և զարմից խոստովանութիւն ապախտ
առնել. մի ընդ և մի երբէք յան-
դգնեալին զօրս 'ի զօյնգիսինս. այլ
և նորին իսկ շնորհ առ նա դիւրոյ վաս-
ժոյժ կրիցս, և 'ի դեղումն եռանդուն
երախտագիտութեան զամօթի հար-
եալ որպէս ընդ կարկաչատուն հոսանս
զարծանազայր գետոց, յոլովագոյն
բերցին առ մեզ ձայնակից անպարտա-
կքն կող մեր մաղթանաց, և 'ի սըր-
բանձայն ակնլուս Արժանաւորացն 'ի
ամին յայսմ առատ՝ բաշխելրս կար-
դացին մեզ վերերգել առ բարձրեա-
լըն և հայցել ընդ նոսա զառատ զը-
թութեան նորա չնորհս անձրևել
տեղատարափ 'ի վերայ անդուդակն
մերոյս բարերարաց. պարտոյս քա-
ջարակի ամօր բարեյաջող խաղա-
ղութեամբ և կեանս անպարտամերձան-
կաւէնս բարօրութեամբ վասն Վենե-
տկոյ ։ Աղօթք մեր այս և խնդրը-
ուածք համօղուածար ժողովոյս ծխա-
կին բարձ 'ի բարձ ընդ ազերանհայց
պաղատանս Արքայիկոյն առաջի աթո-
ռոյ չնորհոյ նորա իբրև զխունկս մա-
նկոց անուշից, և ձայն աղերսանաց
տկարութեան լեզուաց յուղյուղ լինին ի-
չատակս իբրև զՀոգեբարանս սին,
զի ցոլեսցեն երկնիչ զարդարութիւն
նորա իբրև յանձրևաբեր ամպոց
'ի յարկսբնակութեան Վենետկոյ և
չոէմարտիք պարարտութեան առատութ
հացիւ և երկնաւորաց մանանայիւ.
և զուք ո Հարք մեր և Պաշտպանք՝
ընկալարուք զօրհնեհատս ձերոց զերախ-
տագիտութիւն զուարթագնեալ յա-
ւէտ ընդ խոստովանութիւն դիւրազ-
գած սրտից և ընդ եռանդուն չնորհա-
պարտութեան նոցա քան ընդ անհե-
թեթ բանիցն չարադրածս, փոխելով
չափ եթէ անբիծ են սիրով մանկանց
սոցայց և սուրբք խորհուրդք. քան
բանք հաճոյականք և բարբառք բերկ-
րալիք, պատարելագինիցիրաց Աստուածա-
զօր Վեհափառագդ ընդ մերումն աշօ-
թիցս, և ոգիք ձեր զուարճասցին 'ի
նուէրս փարդութե և յերկս Թմթմա-
խոս չքնաղիցս, խանդաղատեսցին

Վեհերդ հոժարի տանել փառաբանեալ անձնէդ զօրհնաբանական խնամոց ըն- տրոցն, և բարեգործ գթոց ան- հարկից մի՛ ՚ի ձեռնտուութեանց փախչե- ցիս, առ քաջալերութիւն Հայկազեան Լուսոյս և Սահակեան Բուրաստա- նիս, որ ձերովդ հաստատեալ տա- ռանուէր նորատիցն քաջ պաշտպաներուն խորդ գնալոյ, և արդասաւ ընկալի քարգաւաճեալ ՚ի հարուստանս, բա- ւորոց երկնից յաւերժացի ՚ի շուք և ՚ի պայծառս սրբոց.

Խոնարհութեամբ
ՄԻ. Ս. Պ. Աշխէլեանեցս։

ԵՐԳ ՄԱՆԿԱՆՑ ԱՌ ՆՈՐ ՏԱՐԻ

Ի շող ՚ի Թայր ամէնափայլ
Արեգն ՚ի կառս ամփիներնս օր,
Նոր մեզ ճոխութեան փայլի նշոյլս
Բարբառէ աշխ.ո Ամենօրն.
Բա՛ց գեղեցան սրախթու.էջ
Ընդեք տարուս յանի ՚ի Թարթ,
Խմբէ պարերգք և մեր Հայր
Շնորհաւորք յորնւերդ Վեհին սրդ.
Դարձցեն սրտանց ձեռն համբուն
Դարձցեն կարցեն բաժակին,
Զ քեզ պաշտել յոքի ձերմ
Ցառատուածեան փառս երկնային.
Զեր մեզ նմանս չէր յարոտ
Զեր սփոփանն Թիւր ցաւոց,
Ալ գին միայն գին Հառաչ
Կեանք յաւ.ոյ աղւ.ոյ խնդրոց.
Ահա տաճկոյ եր ընդ եր
Ի մեջ կենաց անոց մին,
Թափեր առեալ Թեւսավոր
Ըստ տաւայնոց ՚ի կարգին.
Աղջիկ և այս ամ ըստ փայլԹ
Ընդ ձեռն անձոց ընդ երկնից.
Այլ գաւ կացցես յաւիտեան
Տեղեկաբարեաց համայնից.
Ուստի այս օր առաւօտ
Բոլոր սպասէլ զղջնութիւնս,
Ուստի Թէ ընկ. Թաւաթ
Ակիտանեան ծով անհուն.
Էլ մեջ ՚ի ձեռս վերամբարձ
Կարդանք առ քեզ Տէր Հզօր,
Էր զօրաւէր հոյանի
Պատուականացն քոց մնջոր.

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Հանիկ անուն տղեկը։

Ըսու աղօրատանը բնակարանը շատ աղւոր էր, և տան պէս գրեթէ առանց սիրոյ ու յարգոյ մէկը չկար։

Երբոր մէկ քանի հոգի մէկ եղած հարուստի մը վրայօք խօսէին՝ Հանիկ կըսէր, «Ես անիկայ շատ աղէկ կը ճանչնամ», և իրաւ հետ շատ նըս- տած ելած ենք, ու մեկըմէկու հետ աղ ներս բարեկամ ենք»։

Թէ որ մէկ աղքատ մարդու մը վը- րայ խօսելու ըլլային՝ նէքը բարերարութեան ճանօթ կ՚ըլլար անոր և կ՚ըսէր, «Դու- ցէ աղէկ մարդ մը ըլլայ ան՝ բայց չեմ ճանչնար զ»։ Մարդու հետ բարեկամու- թիւն ընել չէր ուզեր, ու միայն կու- զէր կեանք անցընել, թէ և ինքը այն կը հարստութեան փափաքող աղքատ մէկն էր։

Իր աղօթքին շատէն զատ ուրիշ տղաքուտ մը չունէր, ու թէ և ան աղ քիչ էր՝ բայց հաստատ, և քանի որ կար ու կը բանէր՝ իր օրական պա- րէնը ճարելու համար ամէնուքին կառ- կած մը չունէր։

Անոնկ չափաւորութեան սիրով մէ- կին ալ էր, որ ամեն օր քիչ մը բան մէկ դի կը դնէր, զորոնք դրամ ե- ղած ժամանակը զուարճութեամբ կը համրէր։ Իր ունեցած ստակը իր փա- փաքանացը համեմատ չըլլալով՝ ամէն ժամանակ նիւթերը շատ բաներու կա- րօտ կը սեպէր, ու կուզէր որ հարուստ ըլլայ։

Օր մը երբ այս իր փափաքներուն վրայ կը մտածէր, յանկարծ թէ զրոցընե- րէն մէկը անոր մէկ աղէկ դուռն է գտա- նին աղեկէն երեք գիշեր շարունակ անոր վրան երազ տեսնելով։

Այս լուրը խիղճ Հանիկին սրտին մէկ նոր մը եղաւ, աչաւ ես առաւօ- տէ մինչև իրիկուն կ՚աշխատիմ ու կը

հոգնիլ մէկ քանի տարի ձմերուն հա-մար կ'ըսէր բայց ինչ զարմանալի է որ դրացին հանգիստ կերպով անկողինը կը պառկի, ու հազարաւոր օգտակար երազներ կը տեսնայ:

Մհ՛ ; ես ալ թէ որ անոր պէս ե-րազ մը տեսնէի, որդեօք ինչու-րախութեամբ պիտի փորէի գետինը, ու ան տունը հանէի, ու գաղտուկ կերպով տունս տանէի, որ կինս անգամ չիմանար իմանայ. եւ որդեօք ինչ ու-րախութիւն պիտի զգայի երբոր թե-ւերս միշտ ոսկւոյ տոպրակին մէջ խո-թէի ու խառնշտկէի անոր անհամար-ներուն ձայնը առնելով, որ բոլոր երա-ժշտական գործիքին ձայներէն կը գե-րազանցէ:

Այս խորհրդածութիւններն այգո-րաղանի աշխարհքանից կընէին, եւ իր սրտին փափաքը կը զօրացնէին: Մինչ իր մանր մունր վաստակները օրաւ բա-նի մը տեղ չի գտնէր, եւ իր յաճախորդնե-րը կամաց կամաց սկսան պակսիլ:

Օր օրի վրայ ունեցած փափաքը կ'աւելնար, եւ ամեն գիշեր կը պառ-կէր այն տեսակ երազ մը տեսնալու յոյսով:

Բաղդը որ երկար ժամանակ անոր յաջող չէր, վերջապէս գիշեր մը ա-նոր պարտաւորութիւններուն վրայ ծաղր ըրաւ, եւ ան սպասած երազը տեսնել տուաւ անոր:

Երազը տեսաւ որ իր ագարակին մէջ հիման տակը ամանի մը լեցուն ոսկի ա-նհամար թաղուած կար, ու վրան ալ խաչով տափարակ քար մը էր դըր-ուած:

Ու իր բարի բաղդը մեկու մը չի-մացուց, ինչպէս որ տունին վրայ տե-նուած երազներուն սովորութիւնն է, որ յետադայ երկու գիշերը նոյն երա-զը կրկին տեսնայ ու անոր Ճշմարիտ ըլլալը ստուգէ:

Այս բանիս մէջ իր փափաքը լեց-ուեցաւ, ինչու որ ինքը շարունակ երեք գիշեր մի եւ նոյն տեղին վրայ ե-րազ տեսաւ: Ուստի ալ կասկած չի մնացած կարծելով չորրորդ առաւօտ կանուխ ելլալով, բրիչ մը առած ա-ռանձին ագարակը գնաց, ու սկսաւ իր էր ալ տեսած կողմը փորել:

Առաջին անգամ ժամանակի կտոր մը ելաւ, ու քիչ մ'ալ փորելէն ետեւ նոր ու ամբողջ կղմինտր մը գտաւ: Վեր-ջապէս շատ մը փորելէն ետեւ տա-փարակ մը ու դիւրը քար մը գտաւ, որ մարդուն զօրութիւնը կարող չէր տե-ղէն շարժել:

Ահա հոն է գտայ. ահա հոն է, մը-ռթի յաղթանակութեամբ մը, եւ Ճշմա-րիտ այս քարին տակը ոսկի մը կայ ամփոփ ու անհամարներով լեցուն. ուստի ելաւ տուն երթալ բան, ու այս բանը կնկանը իմացնելու, ու անի-կայ մէկ տեղ առած գանձը հոս որ ինծի օգնէ: Մէկէն ելաւ գնաց տուն ու իրեն այս բարի բաղդին ամեն մէկ պարագաները իր կնոջը պատմեց:

Այս ժամանակին ալ դուք ձեռք մե-կարերցէք կնկանը ուրախութիւնը. Հիմայ երկուքը մեկտեղ վերջին աստի-ճան ուրախութեամբ եկան գտին այն փորուած տեղը, եւ չէ թէ այն բա-ցուած պանձերին գտան հոն, հա-պա տեսան որ վերնոց մարքեցունոց ա-ղօրիը փխէր ու գետնին հաւասարեր էր:

Չկամէնք արդեօք անանկ մարդիկ որոնք աղաշութեամբ հարստանալ ուզելով, եւ անխորհուրդ կերպեր բանեցնելով, չեն մտածեր անոր հե-տեւանքը վրայ, եւ ունեցած տուակ-նին ալ կորսնցունելէն ետեւ համար-ձակութիւն ալ կը կորսնցունեն եւ աւե-լի հազի կորսը կ'ըլլան, որոնք ամեն ժամանակ աղքատութեան յաւիտենի կ'երթան:

Յ. Վ. Գ. Կոճիկեան:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ձեռնեւեալ պատմութիւնս աղքա-տաց գթութեան յորդորելու բա-ւական օրինակ մը ըլլալուն համար պատ-շաճ համարեցանք հոս դնել, որոնք գրողները նախկին աշակերտներէն մէ-

կը խեր սառապարտութեամբը մեզի ուղղեր է, ցանկալով որ ընդունելի իւր այս փոքրիկ աշխատութիւնը ապագայ երկասիրութեանը քաջալեր կամ խրախոյս մը տալու համար ։

Լուքնեան Լէօբօլտ անուն դքսին և առաջին իշխան մը որ գիւղացոց և աղքատաց բարերարութի ընելու համար անոնց շատ սիրելի էր, երբ օր մը իւր պալատին հրապարակէն կանցնէր, իրեն փոքր աղջիկը որ պալատին պատուհանէն մէկէն կը նայէր, հօրմէն ողորմութիւն խնդրելու եկած աղքատներուն համար բաւ քանի տիկնոջը, Այս աղքատները գէթ կը ճանճրացընեն, մինչ անօթի ենք բոլորվին. Թող քիչ մը բանիք և հաց ուտեն ։ Լէօբօլտ լսեց այս խօսքը, բայց ամենեւին բան մը չըխօսեցաւ իր աղջկանը գրեթէ չլսացածի պէս անցաւ գնաց, բայց շատ դպաւ իրեն գուշակելով անոր անգթութիւնը երբոր մեծնար նէ ։

Օր մը իշխանը խմացուց որ որսի պիտի երթայ մօտ անտառի մէջ, պզտիկ իշխանուհին շատ ուրախացաւ, վասն զի յառաջուց զուարճացած էր իրեն որ հայրը, որ կուզէր երթայ անոր հետ ինքն ալ պիտի ընկերէ իւր փոքր և գեղեցիկ ձիովը ։ Նշան հաստատուած երթալու ժամանակը, ու երբոր առաւօտ եղաւ, իշխանուհին ուրախութեամբ արթնցաւ, պատրաստուածները հագուցին մէկ գեղեցիկ ամազոնէ զգեստ մը (պիւրիւնճիկ) և մէկ ճերմակ փետուրներով զարդարեալ գլխարկ մը, յետոյ հեծուցին իւր փոքրիկ ճերմակ ձին, որուն փոկը և բոլոր կազմութիւնը զարդարեալ էր կարմիր ժապաւէնէ մանր փունջերով ։ Իշխանուհին ալ շատոնց կը բաղձար սա հեծնելութեանը, առաւ իր հետ ձիադարման մը պահպանութեան համար, և մէկ որսորդի շուն մը ձայն տալու, և ահա Լէօբօլտ իշխանը և բոլոր պալատականները գացին դէպ ի անտառը իշխանուհին ալ ետեւնէն ։ Բայց անոր փոքրիկ ձին որսորդաց ձիերուն պէս արագընթաց չըլլալուն, շուտ մը իշխանուհին ետ մընաց ձիադարմանը և շունը միայն հետը ըլլալով, իշխանուհին կը ճամբորդէր և կ'ըսէր, շուտ երթանք համնինք հօրս և կը փափաքէր առանց ատքին անդին նայելու կամ սպասելու, բայց ձիադարմանը ապառիկ վասնզի էն կակածելով բաւ, տղիքն կարծեմ մոլորեցանք ճամբորդնէն և ահա անտառին շատ մէջն ենք, անտառնը իշխանուհին սկսաւ գոչել սկսեց և գըլուխը դառնալ, վասն զի նոյն օրը բան մը չէր կերած և անօթի էր, քիչ մը հանգչելէն ետքը սկսան բոլոր կողմը փնտրել, բայց անտառը այնչափ մեծ էր, որ ծայրը չէին կրնար գտնալ, իշխանուհին բոլորովին յաղթուած ընկականանց խօսելուն վրայ և իրիկունը վրայ գալով փախչելուն լալ սկսեց, որ գիշերը առանց կերակուրի հոն պիտի անցնենն, ու կ'աղաղակէր Աստուած իմ անօթի եմ, Աստուած իմ, անօթի եմ. Անտառին ձիադարմանը շանը նշան առաւ որ ձայն հանէ քիչ մը, որպէս զի իմանան. շունը խռանակ ձայն մը հանելուն պէս շատ հեռուէն լսեցին փողի մը ձայն, և ահա իշխանուհին ուրախութենէն խենդի պէս կը ցատկէր, սկսան դէպ ի փողին ձայնը վազել, ու ուր տեսաւ իր հայրը որ որսորդներուն հետ նստած կը ճաշէր, իշխանուհին վազեց հօրը գիրկը և լալով ճիշդ փաթթուեցաւ. և պատմեց անոր թէ ինչպէս անտառին մէջ կորսուելու վտանգներ ինկեր և ինչպէս անօթի պիտի մեռնէր ։ Ինչո՞ւ պանիր հաց չկերար բաւ հայրը, լսենէ ըսաւ իշխանուհին գոչելով, իմ աղջիկս, այն աղքատները, որ քեզի ձանձրութիւն կու տային, անոնք ալ ուտելիք չունէին թէ որ ուտենային, քենէ չէին ուզեր ։

Այս խօսքերը իշխանուհիին անանկ դպան, որ անկէ ետքը երբոր կը տեսնար աղքատ մը, որ հաց կուզէ, ատրալով մը կու տայր, շատ բարեք սուրբ վասն զի գիտեմ ինչ բան է անօթութիւնը ։

Յովհաննէս Խալաֆ Շիւքրեան ։

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՅԱՂԹԷ Ի

Ժամանակաւ հեռաւոր քաղաքի մը մէջ հարուստ ադամանդագործ մը կը բնակէր, որն որ իրեն հայրենիքէն ելաւ ուրիշ քաղաք մը ճանապարհորդելու և իւր Թանկագին ադամանդները հոն վաճառելու նպատակաւ, և իրեն հետ իր տղան և ուրիշ ծառայ մը տարաւ։ Այս ադամանդագործը ծառային մատաղ մանկութեան ատենը զանիկայ գներ և մեծ հոգով և հայրական խնամքով կրթեր էր որդեգրի պէս քան թէ իբր ծառայ մը։

Վերջապէս երկարատև ճամբորդութիւն ընելէն ետև ադամանդագործը իւր միտքը դրած քաղաքը հասաւ և նոյն ատեն իւր ադամանդները ծախեց մեծ շահով։

Քանի մը շաբաթէն ետև երբոր իր հայրենիքը վերադառնալու պատրաստութիւն տեսաւ, դժբաղդաբար վաղահաս և անդարմանելի հիւանդութեան մը բռնուեցաւ և անողոքն մահը իւր անգութ մանգաղովը քանի մը ժամու մէջ անոր Թշուառ կեանքը աշխարհէս քաղեց։ Այս երեւելի ադամանդագործը նոյն քաղաքին մէջ օտարական մ'ըլլալուն ամէն մարդ անիկայ չէին ճանչնար, և անծանօթ ըլլալը ծառային խիստ յարմար և քաջալերիչ պատեհութիւն մը եղաւ ինքզինքը մեռեալ ադամանդագործին տղան ձեւացնելու և անոր ամէն ունեցածին տէր և միակ ժառանգ կացուցանելու։

Ադամանդագործին տղին մահուանը դառնակսկիծ ճշմարտութիւնը և այս աղէտալի արկածին լուրը տղուն մայրը անհնարին վշտով լեցուց, բայց թող բազմակական հառաչանօք լայ և ողբայ, ով մտիկ կ'ընէ. իր հօրը ստացուածոյն ժառանգ և անոր հարազատ որդին ըլլալը ամէնուն մէկ կերպով մը չէր կրնար հաստատել։

Այս կերպով ծառային խաբէութիւնը հետզհետէ յաջողելու կէտերը կը հասնէր, մինչև որ մէկ կողմէն հաւանական կ'երեւար որ նոյն պահանջմունքներուն բուն տէրը ծառան ըլլայ. վասն զի երբոր ամէն մարդ անոր դէմքը կը նայէր, վասն զի չէր գտներ ատանկ բան մը ընելը. անոր երկրպագութենէն, գեղափթիթ հասակէն, մարմնոյն գեղեցկութենէն, շնորհագեղ և վայելչադալար դէմքէն և բարոյական կրթութենէն կը գուշակուէր որ անիկայ խաբէութիւն չունի. բայց ընդհակառակն ադամանդագործին տղուն երեւոյթը նուաստ էր, և ծնողքը մանկութեան ատենէն 'ի վեր անոր ամեն յանցանքներուն ներելով և զանիկայ չի սաստելով՝ կրթութիւն խիստ քիչ ունէր. ուստի աւելի հաւանական կ'երեւար որ օտարականները ծառային ժառանգ համարէին քան թէ տղուն։

Վերջապէս վէճը դադրեցնելու համար ադամանդագործին տղան այս բանը դատաւորին ձգեց, բայց 'ի վերայ այսոր ամենայնի փաստ մը չըլլալուն պատճառաւ՝ բանի մըն ալ կայանք չի գտնուեցաւ. դատաւորը երկուքին ալ առաջարկեց որ ճշմարիտը խօսին, բայց դեռ մէկ ըլլալը չի կրցաւ յայտնել, ուստի դատաւորը ըսաւ «Թէ և ճշմարիտ ժառանգը ճանաչելու շատ փորձեր 'ի գործ դրի, բայց մէկն ալ չի յաջողեցաւ. վասն, յայտնի արդացուց և վերջ չունեցող բանը դատելը բաւական դժուար է. Ճշմարիտ ժառանգը ուրիշ բանով չի յայտնուիր, հապա միայն խորամանկութեամբ և քաջարուեստ հնարքով։

Քաղաքացւոց մեծ մասը այս չի լսուած բանին հետաքրքրութիւն ընել սկսաւ, այլ և այլ կարծիքներ տարածեցաւ, և այս խօսքը ամէնուն բերանը ինկաւ, մինչև ատեն անանկ մեծցաւ որ քաղաքին իշխանին իմացընելը պէտք եղաւ։

Այս դիպուածը իշխանին ականջակեցին, բայց նմանապէս ան ալ չփոթեցաւ, և թէև շատ ջանաց, բայց հնարք մը չի գտաւ։ Իշխանին մեծ դատաւորին միայն բարի խորհուրդ մը ինկաւ, որով կրցաւ ճըշմարիտ ժառանգը որոշել. Երկուքն ալ իրեն առջին բերել տուաւ, նախ և առաջ հրամայեց որ դատաստանին

համար պատրաստուած փարաղոյրի մը ետեւը կողմէն, որուն մէջ տեղէն բաւական մեծութեամբ երկու ծակ կայ, և գլուխնին այն ծակերէն դուրս հանեն, և իրենց պատմութիւննին պատմեն ։ Դատաւորը խոստացաւ որ բանը որոշելուն պէս գերի կարծըւածը խակյն գլխատէ ։

Երկուքն ալ այս բանին հաւանեցան․ ակամայորդենայն իր համեստութեանը և այս գաղտնի արդարութեանը ապաւինած եղաւ․ բայց ծառայն սակայն իր ունայնամտութեր կը կարծէր թէ բանը երեւան չի պիտի ելլէ ։

Դատաւորը նստաւ և երկուքն ալ իրենց տեղերնին կայնեցան․ պաշտօնատար մը իր սուրը քաշած անոնց գլխուններին պատրաստ կայներ էր խաբեբայ մարդուն գլուխը կտրելու համար ։

Նոյն ատեն իրենց պատմութիւննին բային, ծառայն իր խօսքը կատարածին պէս, դատաւորը անանց բանը հասկընալու խաժու գինով և ահազին ձայնով մը բաւ, «բաւական է բաւական, շուտով անիրաւին մարմինը գլխատէ», պաշտօնատարը սուրը վեր վերցուցած անոնց վրայ յարձակեցաւ, ծառան ալ կարծելով թէ իրեն խաբեբայութիւնը իմացաւ, իր յանցանքէն խղճի եկած փարաղոյրէն ներս փախաւ, ուրտն դատաւորին ծիծաղին ըրաւը գլխովով անշարժ կեցաւ ։

Ահա այս միջոցին դատաւորը հասկընալով թէ միւսն է ծառան, ամեն ատոցուածները ուր ատա, և թէեւ խաբեբայ ուղղուած մարմը սիրտ գլխատեր, բայց խղճալով միայն հրաման ըրաւ որ իր խաբէութեանը և նենգութեանը համար պատժուի ։

Ահարոն Լեւոն Աւետիս Սէթեան ։

# ՏՆՏԵՍԱԿԱՆ

## ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

### Գետնախնձոր — Փոտատէս[1]

Թէեւ որ գետնախնձորը դեռ ծանօթ չէր, հացի համար գործածուած բոյսն հաճարն էր, որ առաւելապէս սորին ստորին մարդկանց սնունդ կ'ըլլայ ։

Գետնախնձորը անխտիր ամեն ժամանակ ամեն տեղ կրնայ բուսնիլ․ երբ որ կարկուտի, անձրեւի, մէգի, մառախուղի, ցուրտի ու տաքութեան նեղութիւնները Եւրոպայի ամեն մէկ կողմը միեւնոյն ժամանակի մէջ պատահէր նէ, մէկէն չքաւորութիւնը վրայ կը հասնէր, ու աղքատները սովալով թշուառութիւնները չափազանց կ'աւելնային ։

Գետնախնձորին ամենէն եզական բարութիւն ուրիշ տունկերէն տարբեր է, ինչու որ իր պտուղները արեւական դէմ ցուցնելու տեղ, գետնին տակը թաղուած է, որով տաղտկալի սառնամանիքներուն ալ դէմ կը դնէ, կարկուտէն ու մառախուղէն ալ չի վախնար ։

Ուրիշ գրեթէ պարման կամ լաւս բերելով ամեն մէկ ժամանակի մէջ կը անհետի, ու զօրաւոր ախոյեան կը հանդիսանայ աշխարհաւեր սովերու դէմ ։

Այս պարմանոյն բոյսը դեռ ամեն տեղ մշակուած չէ․ միջօրէականի տակ եղած երկիրները, որոնց կլիման շատ չոր է, չեն կրնար առատութեամբ գետնախնձոր յառաջ բերել, նաեւ երբ որ ձիթենի մշակած պտուղները երթանք, այս տունկին մշակութիւնը այնչափ տարածուած չենք տեսնար ։

Փողկէր կամ փողկիզոց բոլորածն ալ շատ առնուած գետնախնձորին տեղը կը բռնէ․ այս տունկս բուսնելու համար պէտք եղած կլիման, գլխաւորապէս երկրորդն ըլլալու է, այսին-

1 Աղգ. բոյլ գետնախնձորոյ ։

քըն չորս ամառ չափ պէտք է որ է֊ մէկօք տաք ըլլայ, ու ամեն բանէն առաջ պէտք է որ անձրեւ ալ չի գայ, քանի որ հունձը չէ հասած ։

Չինթենկայ պատուտները այս հետեւեալ պայմանները խիստ պէտքութեամբ կը նկատեն. Պ. Վ. օգէլինի գրութեանը նայելով, որ Պ. Պոտտարին քննութեանը կը հետեւէր, ամեն երկրին ունեցած կլիմային պարագաներուն նայելով, մայիսի 11 էն մինչեւ սեպտեմբերի 20 ը, և շատ անգամ ալ ատոնցմէ առաջ կամ երկուքին մէջ ալ եղած միջոցները կը մշակեն այս տունկս, Փարիզի կլիմային նայելով յունիսի 1 էն մինչեւ սեպտեմբերի 20 ը եղած միջոցը կը մշակեն, բայց աս ալ շատ անգամ և ուշ կը մընայ ։

Փողփողան շաքանակի (բէտտանէ) համ մը ունի. բայց կ'երեւայ թէ երեն չըլ եղած ժամանակը տաքի ունեցած անտարակոյս ուժին կէսը կ'ունենայ, ու ինչպէս որ բոլոր շաքանակի նման համ ունենալովը, քաղցրութիւն մը կը մատակարարէ ըմպելի ատամներուն ։

Իր ծաղիկները ու տերեւները (որ երբեմն կերպան մորթին) կենդանեաց խիստ անտարակոյս ու օգտակար սնունդ մըն է, ասոր համար այս տունկս քանի մը անգամ կը մշակեն ։

Սովորական գետնախնձորի նման չոր ու տաք երկրի վրայ կը բուսնի ։ Պառօրինեայի բնակիչները այս տունկըս երկրին աւազուտ մասերուն վրայ կը ցանեն ։

Գետնախնձորին ծաղիկները բաւական է որ միայն հողին վրայ իյնայ, ինչու որ մէկէն կը կանանչանայ ու նորէն պտուղ կուտայ. ինչպէս որ Պարոն Պոտտար ալ կ'ըսէ թէ « տասն երեք անգամ գետնախնձոր առի մի և նոյն ծղօտէն և կինոյի նման շարունակել տուիր, բայց այս շատը ինծի բաւական համոզելով փորձս վերջացուցի, ինչու որ հողը անանելուն պէս կը սկսի պտղատանալ ու տնկի » ։

Գետնախնձորը հողէն դուրս պա֊ հողին տակ կերակուրներու ալ կը գործածուի. շատ ախորժելի ու համադամ կ'ըլլայ, և թէ որ ձէթով եփուելու ըլլայ նէ, բնական կանխաւի (Էնկինաւ) միջուկի համ մը կ'առնայ ։

Սարգիս վարդապետ Գ. Շահինեանց.

## ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

### Ժանգոտած բեւեռին բռնտուարուած֊ ներուն դեղ։

Թէ որ մէկը դժուարաւ ժանգահար բեւեռի վրայ կոխէ կամ թէ իր որ և իցէ մէկ կողմը մանէ, թող խակոյն երկթայ թարմ բանջար պանէ, ուղանի լաւ մը ծեծելով իր թունաւոր վէրքին վրայ դնէ, որով կը տեսնէ որ կամաց կամաց ցաւը կ'երթայ, և երբոր բանջարին զօրութիւնը սկսի տկարանալ, այսինքն վրայէն մէկ ժամու մը չափ անցնելու ըլլայ, ուրիշին պէս այս գործողութիւնս նորէն թող ընէ, կը տեսնէ որ առանց իր ոտքն ուռենալու կը բժշկի ։

### Գորտնուկի [1] դեղ։

Թէ որ գորտնուկը բժշկել ուզես, աս հետեւեալ կանոնաւ ընես. որով այն գէշ վէրքը շուտով կ'անցնի. Ըսքէչ մը գարի և ամէնքն մէջ ծեծէ մինչեւ որ փոշի դառնայ, յետոյ զանի ամանի մը մէջ լաւ մը եփէ և լաթէ մը անցընելով հանգստանալ մը դիր. անկէ ետեւ այն ջուրը ժամը մէյ մը բերանդ լուա. կը տեսնես որ այն գէշ վէրքը կ'սկսի անցնիլ.

## ԸՆՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

### Տուն մը խառնավարելու համար հարկաւոր կանոններ.

Տնտեսութեան հարկաւոր կանոնները պէտք է որ կանոյք լաւ

1 Խուրապախներ.

տղին. նաեւ այն օրիորդները՝ որոնք եւցքը ընտանեաց տէր պիտի ըլլան, պարտաւոր են իրենց կրթութեան այս ամենահարկաւոր մասին աչքի հոգ տանիլ ու սորվիլ։ Հարուստներն անգամ՝ որոնք իրենց ընտանեացը սպասքը ծառայի ձեռքով կատարել կուտան, պարտին սորվիլ սա հետեւեալ պատճառներուն համար։

Դիւր է տեսնել թէ որ տան մը տիկինը իւր տանը կառավարութեանը քաջ հմուտ ըլլայ, նա տանը իր ծառաներուն բոլոր սխալմունքն կրնայ կառավարել, ու անոնց ինչ ընելիքը կրնայ գիտնալ։ Իսկ որ իր բանն կառավարութեանը չի հետեւիր, պէտք է յանձնել զանոնք, որուն ճշմարտապէս սխալնին են։

Ընդհակառակը թէ որ տիկին մը այս տնտեսական գործքերու անտեղեակ ըլլայ՝ ամեն աչքի կամ պէտք եղած բաներուն վրայ յանցանք կը գտնէ, ու իր ծառայից հետ միշտ կը հակառակի, և նոյն տանը մէջ եղածներուն խաղաղութիւնը կը վրդովէ։ Այս կերպով նոյն տանը կառավարութիւն աւելի կը գէշնայ, որ մինչեւ անգամ տիկինն ալ կը յուսահատի, ու ինչ ընելիքը չի գիտնար։ Տիկնոջ այս մասին ունեցած տգիտութիւնը շատ ընտանիքներ կը թշուառացընէ, ու շատ տուներու անկարգութեան և խառնակութեան պատճառ կ'ըլլայ։

Այս տգիտութենէն ու սխալմունաց դատողութիւն չըլլալէն է որ շատ ընտանեաց մէջ տեղպ տեղպ ծառայք կը փոխուին։ Մինչ սա որ ծառայք ալ մարդկային սեռէ բանական արարածներ են. երբոր անոնց հետ չարաչար վարուելու ըլլանք, ան ատեն տեղերնին եղածը իրաւունք կ'ունենան։

Երջանիկ է այն ընտանիքը՝ որուն մէջ եղած ծառայից հետ խիստ ու չարաչար վարմունք չըլլար. անոնք ալ մեզի պէս զգացողութեան տէր են, աչքերնին պէտքին կրնան դառնալ. երբոր հաւատարիմ ու հաւնեստ ըլլան պէտք է որ իրենց յարգը մեզի պէս ընդունին. բայց թէ որ խրատունք ու տնտեսութիւն չունենան, կրնան իրենց տեղերնին փոխել։

Կնոջ տան կառավարութեան մէջ ունեցած տգիտութիւնը ծառաներուն հետ գէշ վարուելու պատճառ կ'ըլլայ. ու երբեմն կը պատահի որ ծառան իր տէր տիկնոջմէն աւելի իմաստուն ու խոհական կ'ըլլայ։ Կան անանկ կանայք, որոնք տան հոգերուն գործքերը ձեռքերնին առնելը իրենց անարգ կը սեպեն. բայց աւա՜ղ, ինչ յիմարական մտածմունք ինչ անխորհուրդ գաղափար. Ինչպէս անարգ կրնան սեպել տան պաշտօնը ձեռքերնին առնալը, որոնք թէ իրենց երջանկութեանը և թէ տանը հանդարտութեանը մեծապէս պատճառ կրնան ըլլալ. վասն որոյ պէտք չէ թէ օր և իցէ կին տանիկ յիմարութիւն մտքէն անցընէ. մեր պիտոյքը հոգալը անարգանք չէ մեզի, այլ չի հոգալը։

Աշխատութեան կարող չեղող հարուստներն անգամ իր ունեցած հարստութիւնը առանց վատնելու չի կրնար վայելել. նոյնպէս ալ թէ որ կին մը իւր տանը կառավարութեանը աչքի տէր չըլլայ, ի հարկէ նոյն տանը հանդարտութիւնը չի կրնար վայելել։

Վերջապէս մէկ խօսքով երջանիկ է այն գերդաստանը՝ ուր ընտանեկան պիտոյքը իմաստութեամբ կը կատարուի. և խղճալի է այն ընտանիքը՝ ուր նոյն պիտոյից հոգ չի տարուիր։

Յ. Վ. Գ. Կեշիշեան.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

## ԱՍՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

### Բաժանումն աստեղաց ի համաստեղութիւնս։

ԱՍՏՂԱՑ զանազան համաստեղութեանց բաժանումը ի հարկէ մէկ կարեւոր գիտութիւն մը եղած պիտի ըլլայ, և հին դարերուն մէջ անգամ ընդու-

ների, նաև օդատեսը եղած պիտի ըլլայ ընդհանուր նիւթերուն վրայօք բուսական բոյսեր և գաղափարներ առնելու և հաղորդելու միջով, մանաւանդ անոնց՝ որոնք հոգևորական և երկրագործական գործոց կը վերաբերին. ուստի կը գտնենք որ Զօդիակոսի 12 նշաններուն հնաւուրց քաջահմուտ անձինք իրենց միտքին և փորձառութեանցը համեմատ զանազան անուններ դրեր են։ Այս համաստեղութեանց անունները ամենքը մէկ ժամանակի մէջ չէ դրուեցան, հապա այլ և այլ ժամանակ նշանակած անուն տուած են տարբեր ազգաց անձինք իրենց երկրին կացութեանցը և իրենց երեւցած նիւթերուն նայելով, որոնց ձեւերը և անունները միտքերնին զբաղմունքներուն յարմարութիւն ունէին։

Քաղդեացիք՝ որոնք գրեթէ ընդհանուր աստղաբաշխութեան հեղինակը և ծնողքը կը սեպուէին, հիմակուան խաւարման ծրի վրայ նշանուած մէկ քանի նշաններուն վրայօք դեռ անծանօթ էին. անոնք 10 անգամ արեգական հասարակածէն կամ արեւադարձէն ունեցած հեռաւորութեան և բաժանման կէտերը գիտեր էին. և այս երկու նշաններուն կամ համաստեղութեանցը խեցգետին և այծեղջիւր անունները տուեր էին այն կենդանեաց յատկութիւններէն որոնք իրենց բնաւորութեամբը արեգական ընթացքին նմանութիւնք ունէին։ Պ. Մաքրոպիոս հռչակաւոր հեղինակը իր Սադիրնալիա[1] գրքեկին ա գրքին և 17 գլուխին մէջ սա հետեւեալ կերպով կը պատմէ։

« Նոյնք այն շարժմունքներն են, » որոնք պատճառ եղան այն երկու » համաստեղութեան նշաններուն, » որոնք որ արեգական եզերաց զդրա-» ները կը կոչենք այս այծեղջիւր և » խեցգետնի անունները տալով. Կա-» րիճը կամ խեցգետինը մէկ կենդանի » մըն է, որ ետ ետ կամ խոտորնակի » կ'երթայ. նմանապէս արեգակն ալ » այս համաստեղութիւնին հասնե-» լով, կ'սկսի ետ երթալ և դարձ-» եալ խոտորնակի վար իջնալ։ Զորօ-» րինակ այծեղջիւրը, որուն մանեա-» կերպը բլուրներէն վեր ելնել ու » վար իջնալ է, նմանապէս արեգակը » այծեղջիւրին մտնելով, իր ըն-» թացքին ստորին կէտը կը թողու » բարձրին հասնելու համար »։

Քաղդէացւոց նախնի աստղաբաշխք զօդիակոսի երրորդ նշանը չէին գիտեր, որն որ մենք երկուոր կամ երկուորեակ կ'անուանենք։

Այն համաստեղութիւնը արեգական ճամբուն իրենց բաժանմանց մէջ երկու ուլերու ձեւով նկարուած էին, որոնք մեւմներուն նման իրենց վարած երամներուն և խաշիններուն նայելով, նշանակեր էին այս միջոցս երամոց ծննդեան ժամանակը ըլլալուն համար շատերը երկուորեակ կը ծնանէին։ Վերջապէս բոլոր իրենց աստղաբաշխական դրութիւնը իրենց յարմարութեանցը նայելով, 'ի գործ դրեր էին. և իրենց զբաղմունքը և թափառմունքը մէջ բաւական էին զոյնուք ուղղելու և առաջնորդելու. վասն զի իրենց կեանքերնին բացարձակ և բաց երկիրներուն մէջ անցնելով՝ ճամբորդութիւններուն մէջ հաստատուն աստղերէն զատ 'ի ուրիշ առաջնորդ մը չունէին։

Թէև աստղաբաշխութիւնը մէկ գեղեցիկ ուսումնք մըն է, բայց քիչ յառաջ դրուած էր այն ժամանակը, բայց միայն այնչափ առաջ տարեր էին՝ որչափ որ իրենց գործառնութեանը մէջ իրենց պէտք էր։

Եգիպտացիք աս գիտութիւնը ընդունեցին և բարեկարգեցին. որուն Քաղդէացիք իրր ուսման և փիլիսոփայութեան մեծ առաջնորդ մը չէին պաշտպանած։ Յոյնք իրենց վաճառականութեանցը համար հարկաւոր սեպեցին աս գիտութիւնը մշակելու, ինչպէս որ իրենց փափաքը խնամութեան ուրիշ ազգերուն մէջ ալ յառաջացած է. նաւարկութիւնին յա-

[1] Սադիրնալիա ամենուրութեանց և հրճուանաց օրեր էր, որ երկրին նախնի բնակիչները կը բռնէին 'ի պատիւ Սադուռնոս չաստուածոյն կամ ժամանակին։

տուկ և որոշ ժամանակի մէջ կ՚ընէին, առաջերը իրենց առաջնորդ ունենալով ։

Ինչպէս որ ուրիշ գիտութիւններ, նոյնպէս ալ այս գերագոյն և վսեմ գիտութիւնը Յոյներէն Հռովմայեցւոց անցանելով, և ան ժամանակի եղած բոլոր ազգաց հաղորդեցին, բայց մոլորակաց դրութեանը և երկնից փիլիսոփայութեանը ճշմարիտ գիտութիւնը դեռ անկատար էին ։

Թէպէտև Պաղոմէան, Կոպեռնիկեան և Պիւթագորեան և ուրիշներուն դրութիւնները կային, բայց մէկ կողմանէ գիտակից հարկաւորութեանը համար և միւս կողմանէ ալ ասոր բանին վրայ ունեցած կուսակցական [illegible] համար ճիշդ ու որոշ գիտութիւններ չէին կրնար ըլլալ ։ Այժմեան փիլիսոփայք, և գլխաւորապէս Պ. Իսահակ Նեւթոն ասոնց վրայօք եղած քննութիւններն շատ ընդարձակեցին, բայց առաւել գերագոյն տեսողական գործիքներ ունենալին, հարկաւ շատ դիւրաւ և ընդարձակ դատաւարներ որ օրէ կը հանէին տիեզերքի դրութեանը նայելով ։

Այս ուսմունքը կատարելագործելու մեզ անհնար է, որչափ որ ալ անոր մէջ յառաջացել և զարգացած ըլլանք ։ Այս բանս աղէկ գիտենք որ մեր մտաւոր կարողութիւնները որչափ որ ՚ի գործ դնելու ըլլանք, դեռ առջևնիս անհամար անհուն միջոցներ կան ։

Յովհաննէս Մ. Գալֆէճեան ։

## ԲՆԱԲԱՆԱԿԱՆ

### Բնագիտական հարցմունքներ ։

Արդ ինչու համար թռչնոց հաւկիթներուն կեղևոցը շատ հարկաւոր է ։

Վասն զի հաւկիթներուն մարմինը ոչ բաւականաւ թթուածին և ոչ ալ կիր ունի, որոնց երկուքն ալ շատ պիտանի են թռչնոց, ուստի հարկաւոր էր որ բնութիւնը այս երկու նիւթերը պատրաստէր անոնց համար, այն որ կեղևին միջնորդութեամբը պիտի ընէր, իր թխման ատենը անկից բարկենալով, մինչեւ մէջի եղած կենդանութիւնը իր ոսկորները կազմելու համար բաւական բան ունի առանձնայալ ըլլայ ։ Ու կիրին այս բանին համար մէկ մասը կեղևին հետ կը միանայ և միւս մասն ալ փետուրները կը շինէ ։

Ինչու համար թէ որ հաւերը մէկ տեղ մը գոցուած ըլլան, իրենց հաւկիթները առանց կեղևի կ՚ածեն ։

Կեղևին հարկաւոր եղած նիւթը պարունակող հող չըլլալուն համար է, Ցօրթօր Փարիզ կ՚ըսէ « Եթէ հաւերուն որունդները խոտրուելու ըլլան, առանց կեղևի հաւկիթ կ՚ածեն մինչեւ ան կարգածը վերստին չըլլալնայ » ։

Բնութիւնը նոյն կիրը միշտ շինանի մէջ կը պահէ ոսկորները կրկին յօգելու նպատակաւ ։

Ինչու համար հաւկիթները կոգիով կը պահուի ։

Անոր համար որ կոգին կեղևին ծակտկերը կը գոցէ և այս կերպով կենդանութեան հետ դուրսի օդը հաղորդակցութիւնը կ՚արգիլէ, վերջինն ալ միեւնոյն գործը կրնայ տեսնել ։

Պ. Ռէօմիւր վերնիձին հեղուկով հաւկիթները պատեց և երկու տարիէն ետեւ երբոր դիւրութեամբ մը անոր փոխէն վերնիձը մէկ դի առաւ և հաւուն տակը դնելով թխսել տուաւ ։

Ինչու համար ձերմակ քօղերը արեւակիզութիւնը և մարմնոյն վրայ եղած քիծերը կը սատկեցրնէ ։

Վասն զի անոնք արեւուն լոյսին ցոլութիւնը կը սատկեցրնեն ։

Ինչու համար (ֆանելայն) ձմեռը մարմնոյ տաք կը պահէ և ամառը սառը կը հովէցնէ ։

Անոր համար որ անիկայ թէ մարդուս մարմինէն ջերմութեան ընթացքը և թէ սառին ջերմութեան ազդելը կ՚արգիլէ ։

Հարբուխ և ցուրտ առնող մարդ մը ինչո՞ւ համար կուզէ՝ թաշկինակ մը երեսին բռնելու առնելը բամբակէ թաշկինակէն աւելի գոյնան կը գտնոց.

Վասն զի կտաւը ծծելու տաքութիւնը կը քաշէ և բաբախումն ալ կը կորէ. քանի որ մերձինը ջերմութիւնն անցնելու համար ճամբայ չի տալուն համար բարեխառնութիւնը և ցաւը կը սաստկացնէ.

Ընդհանուր նախապաշարում մըն է, որ բամբակին մէջ թոյն եղած ըլլայ.

Ինչու համար բամբակը միւս մանաթել նիւթերէն աւելի տաք կը պահէ.

Ասոր համար որ եթէ բամբակին թելերը խաշարացուցած գիծներու ըլլանք, կը գտնենք որ անոնց շատ կողմը բարակ ատամնաձեւ յօրինուած է. և ասկից է պատճառ, որ այս ատամնաները շաւենցալ ուրիշ տեսակ թելերէն աւելի դիւրութեամբ իրար կը քաշեն և նոյն նիւթոյ թելերը գերձան շինուած ժամանակը ատանց անոնց մէջ բաւական նեղուկ շնչուր.

* * *

## ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ

### Փետրէլ կամ փոթորիկի թռչուն.

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ծովուն բնիքներէն կերակրող թռչունք երկու տեսակ կ'առնուին. մէկը ցամաքային, և մէկին ալ ծովային. ծովայինները միշտ ծովուն վրայ կ'ապրին. ու ասոնցմէ ոմանք ալ բոլորովին ծովեզրը կը կենան, և հազիւ թէ կը քալեն ու կը լողան. իսկ ցամաքային ըսուած թռչունները՝ ցամաքին վրայ կը թռչտին միշտ, անանկ որ հազիւ թէ քնանալու հարկաւոր ժամանակը կը դադարին. առջիններուն թեւերը ընդհանրապէս շատ կարճ են, և Փէնկուին Մանշոդ և ուրիշ մանր ջրային թռչնոց պէս՝ ամենեւին օդուն մէջ չեն կրնար կենալ, և թեւերնուն վրայ եղած փետուրները տեսնողը խելք կը կործէ. մեծ ծովուն թռչունները ընդհակառակը ուժով և երկայն, և իրենց մարմնոյն տարածին ալ համեմատ թեւեր ունին, որ ցամաքային թռչնոց քով չի կայ. և անոնցմէն ալ Լօպէրեան կամ մեծ նաւապետ է.

Նաւավարները շատ աղէկ գիտած են բոլոր այս թռչունները. որոնք իրենց երբեմն երբեմն ըրած երկայն ճամբորդութեանց ժամանակը կը տեսնուին, որոնց և տեսակ տեսակ անուններ են տուած՝ որոնք կը յիշեցնեն իրենց ունեցած սովորութիւն ինչպէս այս թռչունին Փետրէլ անուն են տուած, որ կը նշանակէ փոքրը Պետրոս. սուրբ առաքելոյն Պետրոսի ջրոյ վրայ պտըտելու հրաշքին նայելով է. և այս անունն ալ այս թռչուններուն իրենց ջրոց մակերեւոյթին վրայ դժուար քալելուն համար տրուած է. որուն վրայ իրենց մաշկապատ տափարակ ոտքերնին մէկ վայրկեանի համար հանգչելու ունելու բաւական յենարան մը կ'ուզեն. նաև շատ զարմանալի է որ այս թռչունները երկու ալեաց ակօսի մէջէն կը փախչին.

Փետրէլները միայն թխսելու համար հարկաւոր ժամանակը ցամաքը կը բնակին, ժայռից խոռոչներուն մէջ հաւկիթ կ'ածեն. և իրենց կերած ու դեռ չի մարսած և արդէն ձէթ դարձած կերակուրն ալ ձագերուն բերնէն վար կը փսխեն. այս եղանակիս մէջ ալ եղած ձէթերը իրենց մէկ հատիկ կերակուրն է. Երբոր անոնց վրայ մէկը յարձակի, նոյն ձէթը անոր երեսին և աչքերուն ուժգին կը փչեն. թէպէտ և իրենց բոյներն ալ խորդուբորդ և բարձր ժայռերուն վրայ հաստատած ըլլալուն՝ մարդ չի կրնար ելլալ.

Մաշկապատաւոր ոտք ունեցող կենդանիներէն Փետրէլներն են, որ ցամաքէն միշտ հեռու կը կենան. նաև երբոր փոթորիկ մը մօտենայ՝ այս թռչունները ծովերուն մէջէն ժայ-

ւերուն վրայ կամ նաւերուն եզերքները ապաստանարան մը փնտռելու կ'ելլան. և սա ունակութիւնն ալ ունենալ իրենց ձուերը ունին. անոր համար է աչնմ որ ատոնց փոթորիկի թռչուն բսած են. և լատիներէն ալ բոլոր ուսումնորուն Պռոսէլլարիա կ'ըսեն.

Փոթորիկի թռչուններուն զանազան տեսակները Բէգուէլ բաւածներէն ոչ միայն համակով կ'որոշուին, այլ նաև գոյնով՝ որն որ ընդհանրապէս սեւի կը զարնէ, նոյնպէս ալ բունգներինն ալ համեմատելով շատ երկայն են, և կատուցնեն ալ քիչ մը կարճ. Այս թռչունին համարակ տեսակը մէկ արտուտի մը մեծութենէն եւել չէ, պուտերնին բոլոր են, և թեւերնուն բացուածքներուն վրայ ալ ճերմակ գծեր կան.

Խաղաղ ժամանակը Բէգուէլ բաւուած թռչունները միշտ ծովուն երեսը կը կենան. երբեմն ալ ալեաց մակերեւոյթին վրայ կը քալեն, և երբեմն ալ կը թռչտին, այլ միշտ թեւերնին ծովուն կը քսքսուեն, կ'երեւան անորէն եւ կը դառնան ապահովութեան միջոցի մը մէջ. բայց երբոր փոթորիկ մը մօտենայ, բաւական ժամանակ առաջ ատոնք ինքզինքնին կը յայտնեն, և կ'իմանան իրենց կեանքին կորուստը, բոլոր ուսողական հոգեւին վրայ աչքի դարնել բանալու մը ատեն ատքին անոքին կը փողեն ապաստանարան մը փնտռելով. նաև երբոր նաւավարները կը տեսնան այս թռչունները բազմութեամբ եկած կեցած նաւերուն կայմերուն վրայ, թէև ծովը հանդարտ ըլլայ, և հովն ալ ամենեւին անզոր՝ այլ կը պատրաստուին առագաստները փոխել.

Բէգուէլին մէկ ուրիշ տեսակը շատ ճանչցուած է նաւավարներէն. և տարօրինակ նարօտ անունը դրուած է իրենց կռնակին վրայ ճերմակ ու սեւ բաժնուած ըլլալուն համար, նաւավարները այս փոթորիկի թռչուններուն համար կ'ըսեն թէ ընկերական բարքերնին մեծ է, և իրենց եգին վրայ ալ շատ սէր ունին: Համարակորէն Բէգուէլները իրենց կրուցին ձեւէն կը տարբերին Բիւֆոն բաւածներէն. որոնց մեծ մասը Եւրոպայի մօտ ծովերուն մէջ կը գտնուին. ատոնցմէ մէկ խումբ մը գարնան մէջ բազմութեամբ Սկովտիոյ եզերքները և մերձակայ կղզիները բոյն դնելու կուգան, որոնց բնակիչները մեծ ջանք կ'ընեն. և ատած կը պահեն ձմեռուան պաշարի պէս. Սոլինկեան կղզիներուն Բիւֆոնները նաւաստակներուն վրայ կը յարձակին, և բռնած որջերնէն կը վանեն ու իրենք կը նոյւին թխսելու համար.

---

## Երգ նաւավարաց յերեւումն թռչնոյն փոթորկի.

Ահա՛ Բէգուէլ, տեսա՛ք զոռ չաւ չարագուշակ
Ահ 'ի պատահմանց մեր կարգաւորեալ մրրկայոյզ.
Անտի ընկերք յաշխարհ 'ի կոծ և 'ի լաց,
Բէգուէլ կենայ եղերական աղետից վրայ.
Զի ծով ահա՛ զեղջկին և պատռա 'ի կառավար
Ցանկեալ շարժմունս զուգավորելոյ հեծանավար.
Մնացէք առաւ կայք զինել մաքեցին
Խաղուիցուցանէ ծով կարգաւորի ամենին.
Զի՞ր տղմակոծ չէք և երկինք ապաստանք
Զի տարա ատեղին փախուստ ուրեք և կայան.
Գտէք ապաստանաքս հասցէ մեր զերկին ապաստան
Ել մի անդրանիկ Գաղիակմ յարձակեալ զմեզ ընկղմել,
Տեսէք ահա մեզ զԲէգուէլս որանգար
Որ ակնատեան յաւելին անդրոյթ և գանգար.

Միքայէլ Յ. Մամիկոնեանց.

---

## ՀԵՆԵԼՈՒԿ

Իս ամուր և անյայտ,
Անգէտ արարած
Անշուք անխաչա
Պանդուխտ անկոտակ:
Ճէնքս է մեռածեւոյ
Աստղերուն ժիրանիր
Եղեաք մը բոն նման
Ունիմ իմ համակիր:

Հեթում Սիրակ Եղիաեան.

---

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ